ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 7

Վերահաշվարկման մոտեցման կիրառումը՝ համաձայն ՀՀՄՍ 29-ի Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում

Հղումներ

- ՀՀՄՍ 12 *Շահութահարկեր*
- ՀՀՄՍ 29 *Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում*

Նախապատմություն

1 Սույն մեկնաբանությունը տրամադրում է ուղեցույց, թե ինչպես կիրառել ՀՀՄՍ 29-ի պահանջները այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում կազմակերպությունը հայտնաբերել է[1] ֆունկցիոնալ արժույթի տնտեսությունում գերսղաճի առկայությունը, երբ այդ տնտեսությունը նախորդ ժամանակաշրջանում գերսղաճային չէր, և, որպես հետևանք, կազմակերպությունը վերահաշվարկում է իր ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 29-ի:

Հարցադրում

2 Մեկնաբանությունում դիտարկված հարցերը հետևյալն են՝

ա) ինչպես պետք է մեկնաբանվի ՀՀՄՍ 29-ի 8-րդ պարագրաֆի <<...պետք է ներկայացվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով>> պահանջը, երբ կազմակերպությունը կիրառում է այս ստանդարտը:

բ) ինչպես պետք է ընկերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հետաձգված հարկերը հաշվառի վերահաշվարկված ֆինանսական հաշվետվություններում:

Փոխհամաձայնություն

3 Այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում կազմակերպությունը հայտնաբերել է գերսղաճի առկայությունը իր ֆունկցիոնալ արժույթի տնտեսությունում, որը նախորդ ժամանակաշրջանում գերսղաճային չէր, ընկերությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 29-ի պահանջները այնպես, իբրև թե տնտեսությունը միշտ գերսղաճային էր: Հետևաբար, սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում առկա ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառված են սկզբնական (պատմական) արժեքով, պետք է վերահաշվարկվեն, որպեսզի արտացոլեն սղաճի ազդեցությունը ակտիվների ձեռքբերման և պարտավորությունների ստանձնման կամ առաջացման պահից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը: Սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ոչ դրամային հոդվածները, որոնք ներկայացված են

[1] Գերսղաճի առկայության հայտնաբերումը հիմնված է ՀՀՄՍ29-ի 3-րդ պարագրաֆի չափանիշների վերաբերյալ ընկերության դատողությունների վրա:

© IFRS Foundation

ձեռքբերման կամ առաջացման ամսաթվից տարբեր այլ ամսաթվի դրությամբ ընթացիկ արժեքներով, պետք է վերահաշվարկվեն՝ արտացոլելով սղաճի ազդեցությունը այդ ամսաթվից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը:

4 Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հետաձգված հարկերը ճանաչվում և չափվում են՝ համաձայն ՀՀՄՍ 12-ի: Սակայն սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված հետաձգված հարկերը պետք է բնորոշվեն հետևյալ կերպ՝

ա) կազմակերպությունը վերաչափում է հետաձգված հարկերը ՀՀՄՍ 12-ի համաձայն այն բանից հետո, երբ այն վերահաշվարկել է ոչ դրամային հոդվածների անվանական հաշվեկշռային արժեքները սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվով՝ կիրառելով այդ պահի չափման միավորը.

բ) <<ա>> կետի համաձայն վերաչափված հետաձգված հարկերը վերահաշվարկվում են՝ հաշվի առնելով չափման միավորի փոփոխությունը սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը:

Ընկերությունը կիրառում է ա) և բ) կետերում նշված մոտեցումը այն հետաձգված հարկերը վերաչափելիս, որոնք առկա են ՀՀՄՍ 29-ը կիրառելու ժամանակաշրջանում ներկայացվող համեմատական ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

5 Կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից հետո, հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների բոլոր համապատասխան թվերը, ներառյալ հետաձգված հարկերը, վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի համար չափման միավորի փոփոխությունը, բայց՝ միայն նախորդ ժամանակաշրջանի վերահաշվարկված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

Ուժի մեջ մտնելը

6 Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2006 թվականի մարտի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ավելի վաղ կիրառումը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը սույն մեկնաբանությունը կիրառման մեջ է դնում 2006 թվի մարտի 1-ից առաջ, ապա նա պետք է բացահայտի այդ փաստը:

© IFRS Foundation